ՄԱՅՐ ԱԹՈՌ

Նոյեմբերի 13-ին Մ. Աթոռ ժամանեց նախարարների խորհրդի գործերի կառավարչի օգնական Արքայական Սենեկապետ Նիկիտին, հետն ունենալով «Պատերազմից Վնասուածների օգնութեան Կովկասեան գլխաւոր Յանձնաժողովի» գործերի վարիչ Ա. Պաւլովին, ծանօթանալու տեղական գաղթականական գործին, առ տեղեաւն քաղելու կարեւոր տեղեկութիւնները և տեսնելու նոցա կացութիւնը և կարիքները։

Վեհ. Հայրապետը բարեհաճեց ընդունել նոցա և մօտ մի ժամ ունկնդրութիւն շնորհելով, մանրամասնօրէն ծանօթացրեց իրերի դրութեան, կարիքների որակին ու քանակին։

Ապա Հայրապետական Դիւանապետի և Տ. Գարեգին վարդապետի ուղեկցութեամբ դիտեցին Մ. Տաճարը, Մատենադարանի շէնքը, Ճեմարանում եղած հիւանդանոցները, Որբանոցը, ուր հիւրերին որբերն ընդունեցին երգով, որ շատ հաճելի տպաւորութիւն թողեց նոցա վերայ։

Այդ այցի ժամանակ բժշկական մասի համար կարեւոր տեղեկութիւններ էին տալիս Նոր-Վեհարանում բացուելիք հիւանդանոցի զինուորական բժիշկները։

Թէև հիւրերի համար պատրաստուած էր նախաճաշ, սակայն շնորհակալութիւն յայտնելով մեկնեցան առանց նախաճաշի իսկ, ժամանակի սղութեան պատճառով։

* * *

Դեկտ. 17-ին Մ. Աթոռ եկաւ Պետական Դումայի անդամ պ. Միք. Պապաջանեան, որին Վեհ. Հայրապետը հաճեց շնորհել ունկնդրութիւն։

Գ. Գապաջանեանը երկու օր Մայրով Մ. Ալբու

թիւններից, որոնց կատարութիւնները անտարբեր աչքով պիտի չկարողանային տեսնել մի ամբողջ ազգի ոչնչացումը։

Այս նպատակով Ն. Սրբութիւնը դեկտ. 19-ին գրեց Միացեալ Նահանգների Նախագահ պ. Վիլսոնին հետեւեալ հեռագրով, ֆրանսերէն լեզուով.

«Վաշինգթոն, Միացեալ Նահանգների Նախագահ Վիլսոնին.

Մեզ հասած տեղեկութիւնների համաձայն Միջագետքում, Հալէպի և Մոսուլի մէջ, ինչպէս և Կիլիկիայում և Կ. Պոլսում, գտնւում են մի քանի հարիւր հազար Հայ, անել վիճակի մէջ և որոնց կեանքը նոյնիսկ վտանգի մէջ է։

Պատերազմի շրջանում գտնուող իմ ազգի միջոցները շատ չնչին են իրենց արիւնակից դժբաղդ եղբայրներին օգնութեան հասնելու համար, մանաւանդ որ ոչ մի միջոց չունենք օգնութեան ձեռք մեկնելու, իսկ օգնութիւնը թշուառութեան վայրերն ուղարկելու ամէն հնարից զուրկ ենք։

Տէր Նախագահ, քաջ ճանաչելով Ձեր ազնիւ սիրտը և Ձեր մարդասիրութեան զգացումները դէպի թշուառները, դիմում եմ Ձեզ Ձերմ խնդրելով, որ հաճիք Տաճկաստանում գտնուող իմ ժողովրդին փրկելու մեծ նախաձեռնութիւնն ստանձնել, կազմակերպելով կարեւոր միջոցներ՝ հայթայթել

նոցա մնունդ, զգեստ և բնակութեան տեղ, աներկբայ կորստից նոցա փրկելու համար։

Իմ ժողովրդի Տաճկաստանում կրած տանջանքներն անհուն են և անսահման. մարդկային պատմութիւնն այսպիսի օրինակներ չունի։ Մեծ հաւատք ունիմ, որ իմ ազգի ողբերգական վիճակը և իմ կոչը Անդր–Ովկիանեան մեծ հանրապետութեան ապետ Նախագահին՝ աներկբայ արձագանք կգտնի նորա սրտի և հոգու մէջ և Ամերիկեան ազնիւ ազգը առանց յապաղելու ձեռք կմեկնէ օգնելու պատմական անցեալ ունեցող մի ժողովրդի, որ այսօր իւր աներկբայ անէացմանն է դատապարտուում։»

Իսկականի վերայ ստորագրած է —

«Գէորգ Ե. Կաթողիկոս եւ Ծայրագոյն Պատրիարք ամենայն Հայոց.»

Նոյն օրը մի այլ հեռագիր ուղղուեցաւ Ամերիկայի հայոց թեմի առաջնորդ Տ. Արսէն ծ. վարդապետ Վեհունուն Ուստր, այս բովանդակութեամբ.

«Այսօր հեռագրով դիմեցինք Ամերիկայի Նախագահ Վիլսոնին խնդրելով իւր նախաձեռնութիւնը Միջագետք աքսորուած հայ թշուառ ժողովրդի և Կիլիկիայի ու Պոլսի հայութեան նիւթական օգնութիւն հասցնելու։

Աշխատեցէք պատգամաւորութեամբ ներկայանալ նորան Մեր կողմից, տալով ըն-

դարձակ տեղեկագիր Հայութեան թշուառ-դրութեան մասին, խնդրելով իր նախաձեռ-նութիւնը ընդարձակ հանգամանութեան՝ ա-պատելու մեռնող Հայութեան մնացորդները, ուղարկելով այդ վայրերը յատուկ լիազօր-ներ՝ կազմակերպելու սնունդի, զգեստի, բնակարանի և բժշկութեան և մարդասի-րութեան գործը։ Մեր կողմից եղած օգնու-թիւնը շատ չափաւոր կլինի, ոչ աւելի քան երկու հարիւր հազար։ Հետեւանքը հեռա-գրեցէք։»

Իսկականի վերայ ստորագրած է.

«Գէորգ Ե. Կաթողիկոս ամենայն Հայոց»

* * *

Դեկտ. 21-ին Վեհ. Հայրապետը իրեն թեթև կերպով հիւանդ զգալով, անկողին մտաւ, սակայն հետևեալ և երրորդ օրը հիւանդութիւնը սուր կերպարանք ստացաւ և Վեհափառ հիւանդի ջերմութեան աստիճանը հասաւ մինչև 40°-ի։ Հիւանդութեան ընթացքին հետևող և խնամող բժիշկ Էյխլերի խորհրդով անմիջապէս բժշկական խորհուրդ հրաւիրուեցաւ, որին մասնակցեց և Երևանից հրաւիրուած բժ. Յովհաննիսեան, որոնց ձեռք առած կտրուկ միջոցների և խնամքի շնորհիւ Ն. Ս. Օծութեան հիւանդագին ծանր դրութիւնը հետզհետէ ապաքինուեցաւ և կազդուրուելու վիճակի դրուեցաւ։

Բժիշկները ամենայն հոգ և խնամք էին տանում և մշտապէս այցելութիւն և հերթապահութիւն անում։

* * *

Դեկտ. 8-ին Մ. Աթոռի ճեմարանում, Ննջարաններում և Մանկավարժական թանգարանում տեղաւորուած հիւանդանոցները փոխադրուեցան Նոր-Վեհարանի շէնքը, որը ժամանակաւորապէս յարմարեցրած է Հիւանդանոցի Քաղաքների Միութեան ծախքով:

Նոր Հիւանդանոցի վերին յարկն ամբողջապէս յատկացրած է զինուորական հիւանդանոցի, որին հսկում են զինուորական բժիշկները, գլուխ ունենալով բժշկապետ Գուբրսկուն:

Հիւանդանոցի առաջին յարկը յատկացրած է Քաղաքների Միութեան հիւանդանոցի, որի հսկողն է, բժ. Հ. Օհանջանեանի այլ տեղ պաշտօնով տեղափոխուելու պատճառով, բժ. Էյխեր:

Թէ առաջին և թէ երկրորդ յարկերը յատկացրած են գաղթականների խնամատարութեան: Հիւանդանոցի պահպանութեան ծախքերը կատարում է Քաղաքների Միութեան տեղական վարչութիւնը, էջմիածնի Եղբայրական Օգն. Յանձնաժողովը հոգում է միայն բժշկական մասի 16 գթութեան քոյրերի ռոճիկները:

Հիւանդանոցը յարմարեցրած է 500 մահճակալի. առաջին օրը հիւանդանոց մտան 131 հոգի, իսկ հետևեալ օրը 52 հոգի:

Հիւանդանոցն ունի իր դեղատունը, խոհանոցը, ներքին ընդհանուր ջերմութեան կենդրոնական վառարաններ ևն., միով բանիւ այն բոլոր յարմարութիւնները, որ կարելի է ունենալ այդքան կարճ ժամանակամիջոցում կազմակերպուած և ճանապարհի հաղորդակցութեան դիւրութիւնից զրկուած հեռաւոր մի վայրում:

Հիւանդանոցի մի մասը Նոր-Վեհարանի շէնքը փոխադրուելով, Ճեմարանի շէնքը չազատուեցաւ ամբողջապէս հիւանդանոցի վերածուած լինելու հանգամանքից: Բուն Ճեմարանի շէնքի մէջ մնում է դարձեալ VI հիւանդանոցը, 150 մահճակալով, իբրև մանկական հիւանդանոց:

Բացի այս երկու մեծ հիւանդանոցներից իբրև հիւանդանոց ծառայում է Ս. Գայիանէի վանքի Նորակառոյց շէնքը,

45 մահճակալով, ուր զետեղւում են բծաւոր տիֆով վարակուած հիւանդները։

Դեկտեմբերի սկզբներից մի յանկարծական զօրեղ և սուր կերպարանք ստացաւ բծաւոր տիֆով վարակւողների չափը։ Որպէսզի հիւանդներին պատսպարելու և խնամելու հնարաւորութիւնը չուշանայ, դեկտեմբերի 16-ից գիւղի մէջ բացուեցան երկու հիւանդանոց. ա) Մանկական բծաւոր տիֆով վարակուածների, 30 մահճակալով և բ) Մանկական ընդհանուր սուր վարակիչ հիւանդութիւնների համար, 30 մահճակալով։ Սակայն այսքան հիւանդանոցներն անգամ անկարող են լինում բաւարարել այն բազմաթիւ հիւանդներին, որ ամեն օր հետզհետէ երևան են գալիս։ Ուստի որոշուեցաւ յունուարի կէսերից բանալ գիւղում և գ) Հասակաւորների համար բծաւոր տիֆով վարակուածների հիւանդանոց, 40 մահճակալով։

Այսպիսով էջմիածնում եղած բոլոր հիւանդանոցների վարչութիւնը կարող է բաւարարել 700 հիւանդի։

Բացի հիւանդանոցներից կայ և առանձին բժշկական կայան (амбулаторія) երթևեկ հիւանդների համար, բժ. Տէր-Մկրտչեանի հսկողութեամբ, ուր գաղթականներն ստանում են բժշկական օգնութիւն, դեղեր, և այցելութիւն իրենց բնակած տների մէջ։

* * *

Որբերի խնամածութիւնը գրաւել է Մ. Աթոռի առանձին ուշադրութիւնը, նոցա, այդ մանկահասակ ոգիների և մարմինների մէջ տեսնելով մեր ապագայ յոյսերը։

Որբերի խնամածութիւնը յանձնուած է առանձին «Որբախնամ մարմնի», հ. Բաբգէն վարդապետի ղեկավարութեամբ, կառավարչուհու և օժանդակ քոյրերի հսկողութեամբ։ Որբերը զետեղուած են թէ ճեմարանի բակում եղած Նախկին-վարժոցի ընդարձակ շինութեան մէջ և թէ գիւղում, առանձին վարձու բնակարանի մէջ։ Առ այժմ խնամուող որբերի թիւը հասնում է մօտ 300-ի, որոնք ստանում են ամեն խնամք և հոգածութիւն։

Դեկտեմբերի սկզբից Որբանոցում պատսպարուած որբերի թիւն այնքան շատացաւ, որ հարկ եղաւ նոցա առանձին վայրեր տեղափոխելու մասին մտածել։ Այդ խնդիրն առաջ եկաւ մասամբ որբերի չափազանց կուտակումից, համեմատաբար փոքր շէնքերում, և մասամբ եւ այն նկատումով, որ նոցա փոխարէն պատսպարուէին այլ բազմաթիւ անխնամ որբեր, որոնք ամենայն օր դիմում էին և մերժում ստանում,—տեղ չլինելու պատճառով— Դժբաղդաբար այսպիսի որբերի թիւը շատ շատ է, որոնց խնամածութիւնը ամբողջապէս ընկնում է ս. Էջմիածնի Որբերի խնամատարութեան Մարմնի և թէ դուրս եղած և նոյն նպատակին աչքի առաջ ունեցող մարմինների վերայ։ Որբերի այլ տեղ տեղափոխելու համար դիմուեցաւ Տփխիս, խնդրելով տեղափոխել այնտեղ կամ այլուր, առ այժմ, 200 որբ, և խնամել այնտեղի ապաստարանների մէջ։

Կար մի որոշ րոպէ, որ ի նկատի ունենալով զանազան քաղաքական և ռազմական տեսակէտներ յարմար համարուեցաւ որբերի ամբողջական, անյետաձգելի տեղափոխութիւնն Էջմիածնից, ուրիշ հեռաւոր և ապահով վայրեր։ Սակայն բարեբաղդաբար այդ երկիւղի րոպէները շուտով չքացան։

Մինչ այս հոգսերով էր զբաղուած Որբանոցի վարչութիւնը, յանկարծ, դեկտ. սկիզբներին Որբանոցի մէջ երեւցաւ 3—4 դէպք բծաւոր տիֆի։ Թէև նոցա ուժեղ և մանկական հասակին միայն յատուկ մարմնակազմի շնորհիւ մահացութեան դէպք չեղաւ, սակայն իսկոյն կարեւոր միջոցներ ձեռք առնուեցան հիւանդ փոքրերին բոլորովին առանձնացնել և Որբանոցի շէնքը բոլորովին դատարկել և այլ տեղ փոխադրել նոցա։

Ճեմարանի ննջարանները. որ այդ րոպէին ազատ էին իրենց մէջ եղած հիւանդներին Նոր-Վեհարանի շէնքը փոխադրուելով. իսկոյն յարմարեցրին Որբանոցի և որբերին այդ տեղ փոխադրեցին. Նախկին որբանոցի շէնքն էլ հիմնական ախտահանութեան ենթարկուեցաւ, իսկ գիւղի

Որբանոցը փոխադրուեցաւ ճեմարան, ի մօտոյ հսկողութիւն ունենալու մանուկների առողջական վիճակի վերայ։

Այս հոգածութիւնների վերայ էր Որբանոցի վարչութիւնը, երբ Որբանոցի կառավարչուհին դեկտ. կէսերին և Որբանոցի վարիչը, Հ. Բաբգէն վարդապետ, դեկտ. 27-ին բծաւոր տիֆով վարակուեցան ծանր կերպով և Որբանոցի վարչութիւնը ժամանակաւոր կերպով անցաւ Ճեմարանի վարչութեան։ Նոր Վարչութեան էական նպատակն եղաւ երեւան եկած բծաւոր տիֆի դէպքերն անմիջապէս անջատել և յատուկ հիւանդանոցներում տեղաւորել, որպէսզի առողջ փոքրերի մէջ չտարածուի հիւանդութիւնը. խիստ մեծ ուշադրութեան առարկայ եղաւ նոյն նիստ ու կացի, մաքրութեան խնդիրը. Որբանոցի այցելուներին բոլորովին արգելուեցաւ որբերին այցելել, որովհետև հետախուզուեցաւ, որ վարակիչ հիւանդութիւնը գիւղից էր անցել Որբանոց, այցելող ազգականների միջոցաւ։ Այսպիսով ձեռք առնուած միջոցների շնորհիւ Որբանոցի, առ բոպէ, վտանգաւոր պայմանները հեռացնեալ անհետացան։

Տ. ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ

(Առաջնորդ Շամախու թեմի)

Նոյեմբերի 19-ին, գիշերուայ ժամը 10-ին, Բագուի Նաւթարդիւնաբերողների խորհրդի Սև քաղաքի հիւանդանոցում կնքեց իւր մահկանացուն Շամախու թեմի առաջնորդ Տ. Կարապետ եպիսկոպոս, մեր սակաւաթիւ միա-